ԼՐԱՄՇԱԿՎԱԾ

ԵՐԿՐԵՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Պ-1217[1]-16.12.2025-ՏՏԳՇ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-5-Ն օրենքի 20-րդ հոդվածում.

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1-ին մաս.

«1.1. Ավագանու անդամը հրաժարականի մասին իր դիմումը կարող է հետ վերցնել այն ներկայացնելու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում ՝ գրավոր դիմում ներկայացնելով:».

2) 4-րդ մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Սույն հոդվածի 1-ին մասի 2-ից 5-րդ կետերով նախատեսված դեպքերում և 6-րդ կետով նախատեսված դեպքում, եթե սույն հոդվածի 1.1-ին մասով սահմանված կարգով ավագանու անդամը հրաժարականի մասին իր դիմումը եռօրյա ժամկետում հետ չի վերցրել, համապատասխան հիմնավորող փաստաթղթերի հիման վրա քաղաքապետը, իսկ սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքերում քաղաքապետի պաշտոնակատարը կամ աշխատակազմի քարտուղարը կազմում են ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին արձանագրություն և յոթ աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում Կենտրոնական ընտրական հանձնաժողով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-5-Ն օրենքի 20-րդ հոդվածում.

~~**1)** 4-րդ մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.~~

~~«4. Սույն հոդվածի 1-ին մասի 2-ից 5-րդ կետերով նախատեսված դեպքերում, իսկ 6-րդ կետով նախատեսված դեպքում՝ ավագանու անդամի կողմից եռօրյա ժամկետում հրաժարականի դիմումը հետ չվերցնելու դեպքում համապատասխան հիմնավորող փաստաթղթերի հիման վրա համայնքի ղեկավարը, իսկ սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքերում նաև համայնքի ղեկավարի պաշտոնակատարը կամ աշխատակազմի քարտուղարը կազմում են ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին արձանագրություն և յոթ աշխատանքային օրվա ժամկետում ուղարկում ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:»:~~

<u>1) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1-ին մաս.</u>

<u>«1.1. Ավագանու անդամը հրաժարականի մասին իր դիմումը կարող է հետ վերցնել այն ներկայացնելու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում ՝ գրավոր դիմում ներկայացնելով:».</u>

~~2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 6-րդ մաս.~~

~~«6. Ավագանու անդամը հրաժարականի մասին իր դիմումը կարող է հետ վերցնել այն ներկայացնելու օրվանից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ գրավոր դիմում ներկայացնելով:»:~~

<u>2) 4-րդ մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</u>

<u>«4. Սույն հոդվածի 1-ին մասի 2-ից 5-րդ կետերով նախատեսված դեպքերում և 6-րդ կետով նախատեսված դեպքում, եթե սույն հոդվածի 1.1-ին մասով սահմանված կարգով ավագանու անդամը հրաժարականի մասին իր դիմումը եռօրյա ժամկետում հետ չի վերցրել, համապատասխան հիմնավորող փաստաթղթերի հիման վրա քաղաքապետը, իսկ սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքերում քաղաքապետի պաշտոնակատարը կամ աշխատակազմի քարտուղարը կազմում են ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին արձանագրություն և յոթ աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում Կենտրոնական ընտրական հանձնաժողով:»:</u>

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

« Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին» (Պ-1217-16.12.2025-ՏՏԳԾ-011/1 , «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» (Պ-12171-16.12.2025-ՏՏԳԾ-011/1) ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ առաջարկությունների

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Նախագիծը, հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	Կառավարություն	«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ 2-րդ հոդված	Հասկացությունների միատեսակությունն ապահովելու նպատակով՝ առաջարկում ենք ժամկետներին առնչվող կարգավորումները վերանայել:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է
2	Կառավարություն	«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին» նախագիծ 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգավորումն առաջարկում ենք նախատեսել գործող օրենքի 70-րդ հոդվածի 1.1-ին մասի տեսքով՝ կարգավորումների տրամաբանական	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխությունը:	

			հաջորդականություն ապահովելու նպատակով:		
3	**Կառավարություն**	**«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում եվ փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ 1-ին հոդված**	1.Հասկացությունների միատեսակությունն ապահովելու նպատակով՝ առաջարկում ենք ժամկետներին առնչվող կարգավորումները վերանայել:	**Ընդունվել է, կատարվել են համապատսխան փոփոխությունները:**	**Ընդունվել է**
4	**Կառավարություն**	**«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում եվ փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ 1-ին հոդված**	2.Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգավորումն առաջարկում ենք նախատեսել գործող օրենքի 20-րդ հոդվածի 1.1-ին մասի տեսքով՝ կարգավորումների տրամաբանական հաջորդականություն ապահովելու նպատակով:	**Ընդունվել է, կատարվել են համապատսխան փոփոխությունները:**	**Ընդունվել է**